ՔԱՆԱՔԵՌԻ ԵՆԹԱԲԱՐԲԱՌԻ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հ. Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Արարատյան բարբառի Քանաքեռի ենթաբարբառով խոսում են Քանաքեռ գյուղի, ինչպես նաև Աբովյանի շրջանի Ջրվեժ գյուղի բնակիչները։

Քանաքեռի ենթաբարբառն ունի 39 հնչյուն։ Ձայնավոր հնչյունները 6-ն են՝ ա, է, ը, ի, ու, օ, բաղաձայնները՝ 33-ը՝ բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, փ, ք, ֆ, գ՛, կ՛, ք՛։

Հին հայերենի համեմատությամբ ավելանում են գ՛, կ՛, ք՛ քմայնացած պայթականները և ֆ շփականը։

Հնչյունափոխություն

Ա. Ձայնավորների փոփոխությունները

Գրաբարի հեմեմատությամբ կատարվում է հետևյալ հնչյունափոխությունը.

Առաջին վանկի նախաշեշտ ա ձայնավորը մի շարք եռավանկ բառերում փոխվում է ը-ի. օրինակ՝ բաժանել> պըժանիլ, անկանիլ>ընգընիլ, ճանաչել>ճընանչիլ, բառաչել>բրոանչիլ և այլն։

Մնացած դիրքերում ա-ն հիմնականում անփոփոխ է մնում։

Միավանկ և երկվանկ բառերի մի խմբում բառասկզբի շեշտակիր ե-ն արտասանվում է -յէ, իսկ մի այլ խմբում՝ է. այսպես՝ ե>յէ-եղն>յէղ, եռ>յէռ, ես>յէս, երդ[իկ]>յէռթիգ, երեսուն>յէռսուն և այլն. ե>է-երես>էրես, եփ>էփ, երեկ>էրէգ, երկու>էրկու, երկանք>էրկանք։

Բազմավանկ բառերում բառասկզբի, ինչպես և բառամիջի նախաշեշտ ե-ն դառնում է ը. ինչպես՝ երեխայ>ըրեխա, երեկոյ>ըրիգուն, երեւիլ>ըրէվալ և այլն։

Ե-ն շեշտվելով ի է դառնում հետևյալ բառերում՝ երեք>իրէք, լեզու>լիզու, լեզուլ>լիզուլ, ալեւոր>հալիվոր։ Շեշտից գրկվելով՝ բառամիջի ե-ն սղվում է միայն երեք բառում՝ բարեկենդան>պարկ՛էնթան, ավելել>ավլէլ, հայելի>հայլի։

Բառավերջի փակ վանկի ե-ն արտասանվում է է. այսպես՝ անմեղ>անմէղ, անձրեւ>անձրէվ, աշակերտ>աշագէրդ և այլն։

է ձայնավորը անփոփոխ է մնում բոլոր դիրքերում. այսպես՝ բառասկզբում՝ էգ>էք, էշ>էշ. բառամիջում՝ դէզ>տէզ-, կէս>կ՛էս, ձեթ>ծէթ, մէջ>մէջ և այլն. բառավերջում՝ թէ>թէ, մարգարէ>մարքարէ, չէ>չէ։

Է-ն դառնում է ի միայն անէծք>անիսկ բառում։ Պարսէտ>պառսօնդ բառում է-ն դառնում է օ։ Դէպի>դրբա բառում առաջանում է է>ը հնչյունափոխությունը։

Ը-ն անփոփոխ է մնում բոլոր դիրքերում. այսպես՝ բառասկզբում՝ ընկեր>հընգ՛էր, ընտրել>հընդրրիլ, ընտանիք>ընդանիք։ Բառամիջում՝ գզել>կըզիլ, գլուխ>կըլուխ, դմակ>տըմագ և այլն։ Բացառություն է քսակ>ք՛իսիգ բառը, որտեղ ը-ն դառնում է -ր։

Ակ կապակցությունից առաջ լավող ը-ն ընկնում է։ Ունենք միայն երկու օրինակ՝ սկեսրայր>կ՛էսաո և սկեսուր>կ՛իսուր։

Ը-ն անփոփոխ է մնում սպասել>ըսպասիլ, սպանել>սրպանիլ բառերում։

Գրաբարյան բառավերջի հավելվածական ն-ին նախորդող ը-ն ընկել է ն-ի հետ միասին առարկա ցույց տվող բառերում. ինչպես՝ ակն>ակ, աղեղն>աղէդ, ամառն>ամառ և այլն։ Հատկանիշ արտահայտող բառերում ն-ն ընկել է, բայց նրան նախորդող ը-ն անփոփոխ է մնացել. ինչպես՝ դառն>կառը, խառն>խառը, սառն>սառը։

Ի-ն անփոփոխ է մնում բոլոր դիրքերում. բառասկզբում՝ ինն>ինը, ինձ>ինձ, իննսուն>իններսուն, իմանալ>իմանալ և այլն։ Բառամիջում՝ գիրկ>կ'իրդ, լինդ>լինդ, լիրբ>լիոփ և այլն։ Բառավերջում՝ ածելի>առծրլի, գարի>կարի, մի>մի, տարի>տարի և այլն։

Իսկի>ըսկ'ի, իրիկուն>ըրիդուն, գիշեր>քըշէր բառերում նախաշեշտ ի-ն դառնում է ը։

Հին հայերենի ո ձայնավորը միավանկ և երկվանկ բառերում բառասկզբի շեշտված վանկում արտասանվում է վո. ինչպես՝ ոսկի>վոսկ'ի, ոտն>վոտ, որբ>վոփ, ոչխար>վոչխար։

Այս օրինաչափությանը չեն ենթարկվում ոսկր>օսկօր, ոռնալ>օռնալ, ո>օվ բառերը, ինչպես նաև որոճալ>արոճ անիլ։ Բառամիջում ո-ն շեշտի տակ ընդհանրապես արտասանվում է օ. օրինակ՝ բոխ>պօխ, բողկ>պօխկ, գոգ>կօգ։

Ո-ն դառնում է ու միայն երեք բառում՝ թոնդիր>թունդիր, սապոն>սապուն, ծոմ>ծում, Ո-ն շեշտից առաջ դառնում է ը. օրինակ՝ կոտորել>կրտօրիլ, մոլորիլ>մըլօրվիլ, սովորել>սրվօրիլ։

Ու ձայնավորն անփոփոխ է մնում սովորաբար բոլոր դիրքերում. բառասկզբում՝ ուզել>ուզիլ, ութ>ութ, ուտել>ուտիլ և այլն։ Բառամիջում՝ բուրդ>պուութ, թութ>թութ, լուծ>լուձ և այլն։ Բառավերջում՝ բու>քօ որու, դու>տու և այլն։

Ու-ն շեշտագրկվելով դառնում է ը. օրինակ՝ բունկալ>պրնա'կալ, ուղղորդ>ըղօոթ, ուղղորդել>ըղօոթիլ։ Բացառություն է՝ ուղարկել>ղրրգ'իլ, որտեղ ու-ն ընկնում է։ Ութիւն ածանցի ու-ն նույնպես դառնում է ը. այսպես ալեւորութիւն>հալիվօրրթյուն, դողութիւն>կողրթյուն, շնութիւն>շրնրթյուն և այլն։ Կակուղ>կակող բառում ու-ն փոխվում է օ-ի։

Բ. Երկբարբառների փոփոխությունները

Այ երկբարբառը բառասկզբում և բառամիջում շեշտված վանկում արտասանվում է է, իսկ երբ շեշտագրկվում է, փոխվում է ը-ի. այսպես՝

Այ>է	Այ>ը
այս>էս	Այսպես>ըսէնց
հայր>հէր	այսքան>ըսքան
մայր>մէր	այսոր>ըսօր

և այլն։

Փայտանալ>փէդանալ և եղբայր>ախպէր բառերում, իբրև բացառություն, այ-ը շեշտագրկվելով, հնչյունափոխվում է է-ի։ Այդի>իք'ի և փայծաղն>փիբէխ բառերում այ-ը դառնում է ի։

Այ երկհնչյունը մի քանի բառերում չի հնչյունափոխվում. այսպես՝ հայելի>հայլի, վայելել>վայէլիլ, խնայել>խընայիլ։ Բառավերջի այ երկհնչյունը կորցնում է յ ձայնորդը. այսպես՝ աշկարայ>աշկարա, գուլպայ>գյուլբա, շուխայ>շուխա և այլն։

Ծանոթություն.—Վերայ>վրրէն բառը ենթարկվել է նույն օրենքին (վերայ>վրրա), բայց անորոշ առումով չի գիտակցվել և իր վրա ընդունելով ն որոշիչ հոդը, դարձել է վրրէն, ինչպես՝ տրղայ>տրղէն, փեսայ>փէսէն, շուխայ>շուխէն և այլն։ Այ-ը չի հնչյունափոխվում միայն հայ և վայ բառերում։

Աւ երկբարբառը հայերենի պատմական հնչյունափոխությամբ մի շարք միավանկ և բազմավանկ բառերում դարձել է օ. ինչպես՝ աւր>օր, աւձ>օց, ծանօթ>ծանօթ, խելօք>խէլօք, խոսիլ>խօսիլ և այլն։ Աւ-ը ձայնավորից առաջ, ինչպես և բառավերջում, դառնում է ավ. ինչպես ծաբուել>ծարբվիլ, աւազ>ավազ և այլն։

Շեշտից առաջ ադատ դիրքի ա-ն հնչյունափոխվում է ը-ի, այսպես՝ հաւաքել>հրվաք'իլ, հաւատալ>հրվատալ։

Սա երկբարբառը միավանկ և բազմավանկ բառերի մեջ սովորաբար դառնում է և. ինչպես՝ ցորեան>ցօրէն, կորեակ>կօրէգ, սարեակ>սարէգ և այլն։

Այս օրինաչափությունից շեղվում է վառեակ>վառիգ բառը, որի եա-ն դառնում է ի։

Մի քանի կրոնական փոխառյալ բառերում եա-ն ունի դրական լեզվի արտասանությունը՝ եա-յա. ինչպես՝ անկեալ>անդյալ, համարեա>համարյա, օրհնեալ>օրհնյալ։ Իռեար>իրար բառում և ձայնավորն ընկել է։

Եւ երկբարբառը բոլոր դիրքերում դառնում է և. ինչպես՝ երեւալ>երէվալ, ձեւել>ձէվիլ, անձրեւ>անձրէվ և այլն։

Եաւ երկբարբառը՝ ենթարկվելով եա>և և ա>վ հնչյունափոխության, դառնում է և. ունենք միայն երկու օրինակ՝ սեաւ>սէվ, բարեաւ>պարէվ։ Եաթն>օխտը բառում ընկնում է ե-ն, իսկ

աաւ-ը դառնում է օ. Ի խուլ շփականի ավելացման պատճառով նրան հաջորդող ռ-ն կորցնում է շնչեղությունը։

Սայ երկբարբառով առկա է միայն կրեայ>կըրյա բառը։ Միայնակ>մէնադ բառում իայ կապակցության ի-ն ընկնում է, իսկ աւ-ը շեշտվելով՝ դառնում է Ա։

Ու երկբարբառի ւ ձայնորդն ընկնում է. այսպես՝ արիւն>արին, ձիւն>ձին, սիւն>սին և այլն։ Միավանկ և երկվանկ մի քանի բառերի մեջ իւ-ն դառնում է ու. այսպես՝ ճիւղ>ճուխկ, հիւսիլ>ուսիլ, առիւծ>առուծ։ Ու-ն շեշտված վանկում դառնում է Ա. կա միայն երեք օրինակ՝ դիւղ>կ'էղ, դիւղացի>կ'էղացի, միւռոն>մէռօն։

Բառամիջյան ոյ երկբարբառը մի խումբ բառերում դառնում է ու. ինչպես՝ բոյթ>բուի, բոյն>պուն, շոյտ>շուտ և այլն։ Մի շարք բառերում ոյ-ը դառնում է ի, ինչպես՝ լոյս>լիս, քոյլ>քիլ, քոյր>ք'իր և այլն։ Բացառություն է անոյշ>անօշ բառը, որի մեջ ոյ-ի յ ձայնորդն ընկնում է, իսկ ո-ն դառնում է օ։

Սուար>շիվար բառում վ-ից առաջ ր-ի փոխարեն լսվում է հ։ Եթե ուա երկբարբառին նախորդում է բառասկզբի երկու բաղաձայն, ապա ր ձայնավորը լսվում է երկու բաղաձայնների մեջ. ինչպես՝ թթուաշ>թրթվաշ, կծուիլ>կրծվիլ և այլն։ Դժուար>գրժար բառում ու-ն ընկնում է։

Բառամիջյան մեկ բաղաձայնի հաջորդող ու-ն վ-ի փոխվելիս՝ իրենից առաջ ր չի ընդունում. այսպես՝ յունուար>հունվար, բուրուառ>փուռվառ, աղուէս>ազվէս, հաշուել>հաշվիլ, պատուական>պատվական։

Դ. Բաղաձայնների փոփոխությունները

Ձայնեղ պայթականներ

Հին հայերենի բառասկզբի ձայնեղ պայթականները օրինաչափորեն փոխվում են խուլ պայթականների։ Բառասկզբում բ պայթականը դառնում է պ. ինչպես՝ բաժանել>պրժանիլ, բահ>պահ, բամբակ>պամբադ> և այլն։ Ր-ն անփոփոխ է մնում միայն դրական լեզվից անցած, ինչպես նաև օտար լեզուներից փոխառյալ բառերում. ինչպես բեմ>բէմ, բազէ>բազէ, բախտ>բախտ, բաշխել>բախշիլ և այլն։

Ր-ն փ է դառնում միայն երկու բառում՝ բրդել>փրոթիլ, բուրուառ>փուռվառ։ Բառամիջում բ-ն պ է դառնում խ բաղաձայնից հետո. ինչպես՝ եղբայր>ախպէր, աղբ>ախպ, աղբիւր>ախպուր։ Անկախ դիրքում, ինչպես նաև փոխառյալ կրոնական բառերում բ-ն փոխվում է փ-ի. ինչպես՝ շաբաթ>շափաթ, խաբել>խափիլ, համբերել>համփէրիլ և այլն։ Ի ձայնորդից հետո բ-ն փ է դառնում. ինչպես՝ ուրբաթ>ուրփաթ, սրբել>սրուփիլ և այլն։ Բացառություն է բոբրոս>պօռպօս, որի մեջ ռ-ին հաջորդող բ-ն բառասկզբի պ-ի առնմանությամբ դարձել է պ։

Մ ռնդայինից հետո բ-ն չի հնչյունափոխվում. օրինակ՝ ամբար>ամբար, բամբակ>պամբադ, բամբասել>պամբասիլ և այլն։ Թամբք>թամք բառում բ-ն ընկնում է։

Բառասկզբում և բառամիջում գ, կ. ֆ ետնալեզվային պայթականները է, ի ձայնավորներից և յ ձայնորդից առաջ քմայնանում են. օրինակ՝ գերան>կ'էրան, գետին>կ'էդին, գինի>կ'ինի և այլն։ Դ ձայնեղ պայթականը բառասկզբում փոխվում է կ-ի. ինչպես՝ գայլ>կ'էլ, գառն>կառ, գլուխ>կլօխ և այլն։

Բառասկզբի գ և կ պայթականներին հաջորդող խուլ բաղաձայնը միանալով նրանց՝ արտաբերվում է միաձույլ և գ-ն կամ կ-ն դառնում է ֆ, ինչպես՝ գիշեր>քըշէր, կշռել>քըշրռիլ, գդակ>քրթագ և այլն։ Բառասկզբի գ-ն չի փոփոխվում միայն մի քանի կրոնական, ինչպես և գրական փոխառյալ բառերում. այսպես՝ գութան>դութան, գազան>գազան, գանձ>գանձ, գաւազան>դավազան։

Բառամիջում անկախ դիրքում գ-ն դառնում է ֆ. ինչպես՝ ագանիլ>հաքնիլ, այգի>իք'ի, Գրիգոր>Կըրիքօր և այլն։ Ն ռնգայինից հետո գ-ն անփոփոխ է մնում. ինչպես՝ գինդ>դինգ, գանգ>զանգ, գանգատ>կանգադ։ Կանգնել>կաղնիլ բառում ն-ից առաջ նգ կապակցության գ-ն դառնում է ղ։ Ր ձայնորդից հետո, ինչպես նաև բառավերջում և ազատ դիրքում գ-ն ֆ է դառնում։ Օրինակ՝ կարգ>կարք, մարգարիտ>մարքարիդ, Գէորգ>կ'էվօրք և այլն։

Դ-ն բառասկզբում գրեթե մշտապես դառնում է տ. օրինակ՝ դանակ>տանագ, դառնալ>տառնալ, դատարկ>տառդագ և այլն։ Դ-ն անփոփոխ է մնում միայն մի քանի բառերում. օրինակ՝ դեկտեմբեր>դէքտեմբէր, դեպի>դրբա, դիպիլ>դիբնիլ և այլն։

Բառամիջում անկախ դիրքում, ինչպես և բառավերջում, դ-ն դառնում է թ. օրինակ՝ զօդել>զօթիլ, դդում>տրթում, օգ>օթ։ Ր ձայնորդից հետո դ-ն թ է դառնում՝ արդար>առթար,

բարդ>պառթ, բրդել>փրոթիլ և այլն։ Ն ռնգայինից հետո դ-ն չի փոփոխվում մի քանի բառերում. օրինակ՝ գերանդի>կ՝ էրանդի, թունդ>թունդ, հունդ>հունդ, պինգ>պինդ, ցնդիլ>ցընդրվիլ, հիւանդ>հիվանդ։ Մնացած բառերում ն-ին հաջորդող դ-ն դառնում է թ. օրինակ՝ անդունդ>անտունթ, բարեկենդան>պարիկ՝ էնթան, ծննդկան>ծրնրթկան, ծնունդ>ծրնունթ, խրնդրել>խրնթրրիլ և այլն։

Զ-ն բառասկզբում դառնում է ծ. ինչպես՝ ձախ>ծախ, ձեռն>ծէռ, ձմեռն>ծրմէռ և այլն։ Բացառություն է՝ ձար>ձար, իսկ ձայնազուրկ>ձայնազուրգ բառը դրական փոխառություն է։

Բառամիջում և բառավերջում ն ռնգայինից հետո ձ-ն չի հնչյունափոխվում. այսպես՝ աղանձ>աղանձ, անձրեւ>անձրէվ, խանձիլ>խանձվէլ, տանձ>տանձ և այլն։ Ր բաղաձայնից հետո ձ-ն ղ է դառնում. օրինակ՝ բարձր>պանցրր, խուրձ>խուղց, որձ>վոդց և այլն։

Բառավերջում ռ բաղաձայնից հետո, նաև ազատ դիրքում ձ-ն ց է դառնում. ինչպես՝ դաղձ>տախց, դեղձ>տէխց, մաղձ>մախց, օձ>օց։ Վարձք>վառցք>վառսկ բառում ձ-ն ՝ հոգնակերտ վերջավորության ազդեցությամբ դառնում է ս և փոխազդելով ռ-ի վրա՝ նրան զրկում է շնչեղությունից։

Բառասկզբում ջ-ն մշտապես ճ է դառնում. այսպես՝ ջրաղաց>ճաղաց. ջարդել>ճառթիլ, ջիլ>ճիլ և այլն։ Բացառություն է ջուխտակ>ջուխտակ։ Կրոնական փոփոխություն է՝ ջահ>ջառ։

Բառամիջում անկախ դիրքում ջ-ն դառնում է շ. օրինակ՝ յաջողութիւն>աչողրթյուն, ոջիլ>վոչիլ, հաջել>հաշալ։ Ք-ն բաղաձայնից առաջ դառնում է շ. մէջք>մէշկ, որից՝ միջնակ>միշնէդ։ Պղպջալ>պրղպրջալ>պրճպրճալ բառում պ-ի ազդեցությամբ ջ-ն ճ է դառնում։ Ետրնթաց առնրմանությամբ ղ-ն փոխվում է ջ-ի և իրեն նախորդող պ-ի ազդեցությամբ նույնպես դառնում է ճ։ Ն ռնգայինից հետո ջ-ն անփոփոխ է մնում. այսպես՝ ինջել>ճրնջիլ, երինջ>էրինջ, կամուրջ>կարմունջ։

Ր ձայնորդին հաջորդող ջ-ն մշտապես շ է դառնում. ինչպես՝ արջ>առշ, վերջ>վէրշ, թրրջել>թրրշիլ և այլն։ Աղջիկ>ախշիդ և ողջոյն>վոխշում բառերում ղ բաղաձայնին հաջորդող ջ-ն դառնում է չ։

Խուլ պայթականներ

Պ-ն անփոփոխ է մնում բոլոր դիրքերում. օրինակ՝ բառասկզբում՝ պակաս>պակաս, պահել>պահիլ և այլն։ Բառամիջում՝ կապոյտ>կապիտ, կուպր>կուպրր և այլն։ Բառավերջում՝ իսնեպ>խրճեպ, ծոպ>ծօպ, կապ>կապ և այլն։

Ս. սպ կապակցության պ-ն դառնում է փ. ունենք երեք օրինակ՝ պսակ>փրսադ, ոսպրն>վոսփ, նսպաստակ>ալափրստրագ։ Բառամիջում և բառավերջում անկախ դիրքում պ-ն դառնում է բ. օրինակ՝ ապսպարել>աբրսպարիլ, ապրշում>արրոշում, ապրանք>արրանր և այլն։

Կ-ն բառասկզբում մշտապես անփոփոխ է մնում՝ քմայնանալով Ե. ի ձայնավորներից և ՝ ձայնորդից առաջ. այսպես՝ կացին>կացին, կէս>կ՝էս, կիր>կ՝իր, կոտորել>կրտորիլ և այլն։

Խուլ և ձայնեղ բաղաձայնների քանակի հավասարության կամ խուլերի թվի գերակշռության դեպքում բառամիջում և բառավերջում կ-ն անփոփոխ է մնում. այսպես՝ բառամիջում՝ կակուղ>կակոդ, կարկատան>կրրկատան, ոսկր>օսկոռ և այլն։ Բառավերջում՝ կայծակ>կայծակ, կոճակ>կօճակ և այլն։

Ձայնեղ բաղաձայնների և ձայնորդների քանակի առավելության դեպքում բառամիջում և բառավերջում կ-ն դառնում է գ։ Այսպես՝ բառամիջում՝ երեկոյ>ըրրիգուն, երկայն>յէրգար, ուզարկել>զրրզ՝իլ և այլն։

Բառավերջում՝ աղջիկ>ախշիդ, բամբակ>պամբադ և այլն։

Բառավերջում կ-ն անկախ դիրքում գ է դառնում՝ իրեն նախորդող ձայնավորից առաջ գրտնվող ձայնեղ կամ ձայնեղացած բաղաձայնի կամ ձայնորդի ազդեցությամբ. այսպես՝ կլայկ>կրլեգ. կորեակ>կօրէդ, ջոկ>ճօդ, բոկիկ>պօբիդ, գոտիկ>կօդիդ, զատիկ>զադիգ և այլն։ Բացառություն է շապիկ>չարիք բառը՝ կ>ք հնչյունափոխությամբ։

Ն ռնգայինից հետո կ-ն մշտապես դառնում է գ. ինչպես՝ անկանիլ>ընգրնիլ, բունկալ>պրնգալ, ճանկ>ճանդ, ցնկնիլ>ցրնգնիլ>ցրգնիլ և այլն։

Տ-ն սովորաբար անփոփոխ է մնում. այսպես, օրինակ՝ բառասկզբում՝ տաճար>տաճար, տայգր>տէրրր, տանձ>տանձ և այլն։ Բառամիջում՝ աստղ>աստրդ, կատաղիլ>կատագիլ, կտաւ>կտավ և այլն։ Բառավերջում՝ ազատ>ազատ, արտ>առտ, ծիրտ>ծէրտ և այլն։

r ձայնորդից հետո տ-ն փոխվում է դ-ի. ինչպես՝ պատրաստ>պադրաստ, պատրոյգ>պադրուք, քըրտինք>քըրդինք և այլն։ Ն ռնգայինից հետո տ-ն դ է դառնում. այսպես՝ անտէր>անդէր, ընտանիք>ընդանիք, սանտր>սանդըր և այլն։

Բացառություն է տնտես>տընտէս բառը, որի մեջ տ-ն անփոփոխ է մնացել՝ բառում գերակշռող խուլ բաղաձայնների ազդեցությամբ։

Անկախ դիրքում տ-ն մշտապես դ է դառնում. այսպես՝ պատմել>պադմիլ, հաստատել>հասատադիլ և այլն։ Շտապ խմբում տ-ն ընկնում է. օրինակ՝ պաշտպան>պաշպան, պաշտպանել>պաշպանիլ։ Փտել>փրթիլ բառում նախորդ փ-ի ազդեցությամբ տ-ն շնչեղանում է։

Ծ բաղաձայնը անփոփոխ է մնում բոլոր դիրքերում. ինչպես՝ բառասկզբում՝ ծալել>ծալիլ, ծախել>ծախիլ, ծակ>ծակ և այլն։ Բառամիջում՝ ածելի>առծըլի, անիծել>անրծիլ, կծիկ>կըծիկ և այլն։ Բառավերջում՝ այծ>էծ, լուծ>լուծ և այլն։

Գործ>կօռձ, թրծել>թըռձիլ, մեծ>մէնձ, ածուխ>անձօղ բառերում r, n, և ձայնորդներից հետո ծ-ն փոխվում է ձ-ի։ Բառամիջում և բառավերջում և, f պայթականներից առաջ ծ-ն փոխվում է ս-ի. այսպես՝ անէծք>անիսկ, ծածկել>ծասկ՛իլ, կազմուածք>կազմըվասկ. կրծկել>կըսկ՛իլ և այլն։ Փայծաղն>փիցէղ բառում բառասկզբի շնչեղ խուլ պայթականի ազդեցությամբ օ-ն դառնում է գ։

Ճ-ն ամեն դիրքում էլ մնում է անփոփոխ. ինչպես՝ բառասկզբում՝ ճկոյթ>ճըկութ, ճոպան>ճօպան, ճակատ>ճակատ և այլն։ Բառամիջում՝ կոճակ>կօճակ, հաճար>ատճառ, կուռճ>կըճուճ և այլն։ Բառավերջում՝ արճիճ>առճիճ, գաճ>դաձ, կարիճ>կարիճ և այլն։

Ն ռնգայինից հետո ճ-ն ջ է դառնում. այսպես՝ ճանճ>ճանջ, եղինճ>աղինջ, ճենճ>ճէնջ։ Ճ-ն ջ է դառնում նաև ղ բաղաձայնից հետո. այսպես՝ խեղճ>խէղջ, խիղճ>խիղջ, խղճմտանք>խըղջմըտանք։ Կոճակել>կօճկ՛իլ>կօշկ՛իլ բառում նկ կապակցության ն-ն դարձել է շ։

Շնչեղ խուլ պայթականներ

Փ-ն անփոփոխ է մնում բոլոր դիրքերում առանց բացառության. այսպես՝ բառասկզբում փարչ>փառչ, փախչիլ>փախչիլ և այլն։ Բառամիջում՝ ափսոս>ափսօս, եփել>էփիլ և այլն։ Բառավերջում՝ թեփ>թէփ, թուփ>թուփ, խոփ>խօփ և այլն։

Թ-ն ամեն դիրքում էլ անփոփոխ է մնում. ինչպես՝ բառասկզբում՝ թան>թան, թաղել>թաղիլ, թանաք>թանաք և այլն։ Բառամիջում՝ աղօթք>աղօթք, թաթախել>թաթախիլ և այլն։ Բառավերջում՝ թաթ>թաթ, ամօթ>ամօթ, քիթ>ք՛իթ և այլն։

Թմրիլ>գըմբրիլ>դըմբըրիլ բառում թ-ն դ է դառնում։

Ք կապակցությունը երկուսի միացությամբ դարձել է ց վաքսուն>վացուն բառում։ Ուքսուն բառը եօթանասուն>օխտանասուն բառի նմանությամբ դարձել է ուքանասուն։ Ղք կապակցությունը երկուսի փոխազդեցությամբ դարձել է խտ. այսպես՝ թուղթ>թուխտ, մաղթել>մախտել և այլն։

Հ-ն անփոփոխ է մնում բոլոր դիրքերում՝ քմայնանալով ն, հ, յ-ից առաջ. այսպես՝ բառասկզբում՝ քաղել>քաղիլ, քազցր>քախցըր և այլն։ Բառամիջում՝ փուքս>փուքս, զոքանչ>զանքաչ և այլն։ Բառավերջում՝ թոք>թօք, յոնք>ունք, երեք>իրէք։ Ռ, ս, շ խուլ շփականներից հետո Ֆ-ն դառնում է կ. այսպես՝ խոսք>խոսկ, աչք>աշկ, մեջք>մէշկ և այլն։

Սովորաբար գ-ն անփոփոխ է մնում. այսպես՝ բառասկզբում՝ ցախ>ցախ, ցանել>ցանիլ և այլն։ Բառամիջում՝ անցանիլ>անցնիլ, աքացի>քացի և այլն։ Բառավերջում՝ բաց>պաց, թաց>թաց, վեց>վէց։

Ուռուցք>ուռուսկ և փրցլինք>փրսլինք բառերում ց-ն դառնում է ս։

Չ-ն անփոփոխ է մնում բոլոր դիրքերում. ինչպես՝ բառասկզբում՝ չար>չար, չոր>չօր, չէ>չէ և այլն։ Բառամիջում՝ փչել>փըչիլ, կանչել>կանչիլ, փախչիլ>փախչիլ։ Բառավերջում՝ ինչ>ինչ, խաչ>խաչ, շունչ>շունչ և այլն։ Կ, տ, ֆ պայթականներից առաջ չ-ն դառնում է շ։ Օրինակ՝ աչք>աշկ, խմիչք>խըմիշկ, փոնչտալ>փրոըշտալ։

Ձայնեղ շփականներ

Զ-ն ամեն դիրքում էլ անփոփոխ է մնում. օրինակ՝ բառասկզբում՝ զանգ>զանգ, զատիկ>զադիգ, զարդ>զառթ և այլն։ Բառամիջում՝ ազնիվ>ազնիֆ, եզն>յէզ, զգել>կըզիլ և այլն։ Բառավերջում՝ դեզ>տէզ, թուզ>թուզ, աւազ>ավազ և այլն։

Ազ կապակցություններ բառամիջում և բառավերջում դառնում է սկ. ազգ>ասկ և անրդ-գում՝ անրսկամ բառերում։

Ժ-ն անփոփոխ է մնում բոլոր դիրքերում. ինչպես՝ բառասկզբում՝ ժանդ>ժանգ, ժախ>ժախ և այլն։ Բառամիջում՝ արժան>առժան, արժել>առժիլ և այլն։ Բառավերջում՝ խաժ>խաժ, կուժ>կուժ, ոյժ>ուժ և այլն։

Ենթարարբառի կ խուլ պայթականից առաջ ժ-ն դառնում է շ երկու բառում՝ դրժգոհիլ>տրշ-կոհիլ և չարժր>ժաժր>ժաշկ։

Սովորաբար ռ-ն անփոփոխ է մնում. այսպես, օրինակ՝ բառամիջում՝ աղալ>աղալ, լեղի՝ լեղի. աղիր>աղիք և այլն։ Բառավերջում՝ գիւղ>կ'էկ, գող>կող, դեղ>տէղ և այլն։ Բառասկզբում ղ կա միայն երեք բառում, որոնցից Ղեւոնդ>Ղէվոնդ և Ղուկաս>Ղուկաս հատուկ անուններ կրոնական փոխառություն են, իսկ ուղարկել>ղրրդ'իլ բառը ձևավորվել է ու ձայնավորի անկման հետևանքով, որը, սակայն, օրինաչափություն չէ։

Խոսվածքիս սլ, ռ, կ, ծ խուլերից և ց, չ շնչեղ խուլերից առաջ ռ-ն դառնում է ռ. օրինակ՝ աղբ>ախպ. խեզդել>խէխտիլ, աղբատ>ախկաղ և այլն։

Վ-ն անփոփոխ է մնում բոլոր դիրքերում. ինչպես՝ բառասկզբում՝ վարդ>վառթ, վիզ>վիզ, վազել>վազիլ և այլն։ Բառամիջում՝ բովել>պովիլ, սովորել>սրվորիլ և այլն։ Բառավերջում՝ ծով>ծով. կով>կով, հով>հով և այլն։

Խուլ շփականներ

Ս-ն ամեն դիրքում էլ մնում է անփոփոխ. ինչպես՝ բառասկզբում՝ սալ>սալ, սամի>սամի, սանդ>սանդ և այլն։ Բառամիջում՝ ասել>ասիլ. խոսիլ>խոսալ և այլն։ Բառավերջում՝ այս>էս, ամիս>ամիս, աղուէս>ազվէս և այլն։

Մասնավոր դեպքեր են՝ սալոր>շրլոր, սեամ>շէմ։

Բոլոր դիրքերում շ-ն անփոփոխ է մնում. օրինակ՝ բառասկզբում՝ շահ>շահ, շաղ>շաղ, շինել>շինիլ և այլն։ Բառամիջում՝ կաշի>կաշի, աշուն>աշուն և այլն։ Բառավերջում՝ թուշ>թուշ, նուշ>նուշ, էշ>էշ և այլն։

Խ-ն անփոփոխ է մնում բոլոր դիրքերում. այսպես՝ բառասկզբում՝ խաշ>խաշ, խալ>խալ, խաչ>խաչ և այլն։ Բառամիջում՝ ախոռ>ախոռ, ծախել>ծախիլ և այլն։ Բառավերջում՝ ձախ>ծախ. թուխ>թուխ, խուխ>խուխ և այլն։

Խաղ>հաղ և խաղող>հավող բառերում ետնալեզվային շփական հնչյունների ետընթաց տարնմանությամբ խ-ն դարձել է հ. իսկ ղ-ն՝ վ։ Շաղախ>շրղաղ և շաղախել>շրղաղիլ բառերում ղ-ի առաջընթաց առնմանությամբ խ-ն դառնում է ղ։

Սովորաբար հ-ն անփոփոխ է մնում. օրինակ՝ բառասկզբում՝ հազ>հազ, հաղար>հաղար, համ>համ և այլն։ Բառամիջում՝ Աբրահամ>Ապրրհամ, դժգոհել>տրշկոհիլ և այլն։ Բառավերջում՝ բահ>պահ, մահ>մահ, շահ>շահ և այլն։

Հոտ>ֆոտ, հորթ>ֆոթ միավանկ բառերում, ինչպես և նրանց ածանցյալ և բարդացած ձևերում հ-ն դառնում է ֆ՝ հոտել>ֆոտիլ, հորթանոց>ֆոթանոց և այլն։ Ր բաղաձայնից հետո հ-ն ընկնում է։ Կա միայն երեք օրինակ՝ աշխարհ>աշխար, խորհուրդ>խորուրթ, շնորհակալ>շրնորագալ։ Կրոնական փոխառյալ բառերում ռհն խմբի ռհ-ն դարձել է խ. օրինակ՝ օրհնել>ոխնիլ, ջրօրհնէք>ճրրոխնէք և այլն։

Մասնավոր դեպքեր են՝ հաճար>աճառ և ջահ>ջառ (վերջինս կրոնական փոխառություն է)։

Ձայնորդներ

Լ-ն մնում է անփոփոխ առանց բացառության բոլոր դիրքերում՝ լաց>լաց, ալիր>ալիր, գայլ>կ'էլ և այլն։

Մ-ն մշտապես անփոփոխ է մնում՝ մատն>մատ, մարագ>մարաք, ման>ման, դմակ>տրմագ և այլն։

Ն-ն անփոփոխ է մնում բոլոր դիրքերում՝ նա>նա, նագ>նաղ, անձրև>անձրէվ և այլն։ Բ. պ. ի շրթնային պայթականներից առաջ դառնում է ս. ունենք երեք օրինակ՝ անբախտ>սմրախտ, անբան>ամպան, ճանապարհ>ճամփա։

Բառասկզբում ռ ձայնորդը մի շարք բառերում դառնում է հ. ինչպես՝ յարմար>հարմար, յայտնի>հայդնի, յիշատակ>հիշատակ և այլն։ Մի քանի այլ բառերում յ-ն ընկնում է, այսպես՝ յաչող>աչող, յօժար>օժար, յոնք>ունք և այլն։

Բառամիջում և բառավերջում յ-ն եղել է երկբարբառի տարր. նրա կրած փոփոխություններն տե՛ս «Երկբարբառների փոփոխությունները» բաժնում։

Ր-ն բառամիջում սովորաբար անփոփոխ է մնում. օրինակ՝ արեւ>արէվ, բերել>պէրիլ, գարի>կարի և այլն։

Դ, տ, թ պայթականներից և ձ, ծ, ց պայթաշփականներից առաջ ր-ն դառնում է ռ. ինչպես՝ դատարկ>տառդագ, ծիրտ>ծէռտ, գործ>կօռձ և այլն։ Բացառություն է՝ բարձր>պանցըր՝ ր>ն հնչյունափոխությամբ։

Ժ բաղաձայնից առաջ ր-ն դառնում է ռ. ինչպես՝ արժան>առժան, արժէք>առժէք։

Մասնավոր դեպք է՝ շարժ>ժաժ, որից՝ շարժք>ժաշկ։

Բառավերջում ր-ն անփոփոխ է մնում. ինչպես՝ ալիւր>ալիր, գիշեր>քըշէր, ծանր>ծանդրո և այլն։

Բացառություն է՝ ոսկր>օսկօռ։

Ր-ն ռ է դառնում կրկնությամբ կազմված բառերում. ինչպես՝ մարմար>մառմառ, թրթուր>թըռթուռ, փրփուր>փըռփուռ։

Ռ-ն անփոփոխ է մնում բոլոր դիրքերում առանց բացառության՝ ռեհան>ռէհան, ագռաւ>ակռավ, գոռալ>կօռալ և այլն։

Անկում

Հին հայերենի բառերը բարբառային բառերի հետ համեմատելով նկատում ենք, որ մի շարք բառեր Քանաքեռի ենթաբարբառում կորցրել են բառամիջյան բաղաձայններից որևէ մեկը։ Բաղաձայնների անկման դեպքերը հետևյալներն են.

Ր ձայնորդն ընկել է. ա) ժ, շ, ս բաղաձայններից առաջ՝ խարշել>խաշիլ, դուրս>տուս, փրցլինք>փըսլինք>, բ) ճ. չ շչականներից առաջ՝ արշառ>աշառ, ջրաղաց>ճաղաց, գ) Ր բաղաձայնից առաջ՝ հորաքույր>հօք՚իր, մորաքույր>մօք՚իր, դ) ն կոկորդայինից առաջ՝ շնորհաւոր>շընրհավօր։

2. Հ բաղաձայնն ընկել է. ա) ր ձայնորդից հետո՝ շնորհք>շընօրք, շնորհակալ>շնօրակալ, բ) ս բաղաձայնից առաջ՝ պահք>պահս>պաս, գ) ռտն խմբում՝ գորտնուկ>կօռնուգ, դ) ս-ն ընկել է տեսանել>տէնալ բառում։

Հավելում

Հ հնչյունն ավելացել է բառասկզբում, ձայնավորներից առաջ. օրինակ՝ ալեւոր>հալիվօր, երդ/իկ/>հէռթիգ. ոլոր>հըլօր (միայն Ջրվեժի խոսվածքում) և այլն։ Բառամիջում՝ լուսնեակ>լիսնրհագ։

Ն հնչյունն ավելացել է ենթաբարբառում ձ, շ բաղաձայններից առաջ. ինչպես՝ մեծ>մէնձ, ածուխ>անձօղ, կանաչ>կանանշ, բառաչել>բըռանշիլ և այլն։

Դ բաղաձայնն ավելացել է ներ կապակցության ն և ր ձայնորդների միջտեղում. օրինակ՝ օանր>ծանդրը, մանր>մանդրը, ծունր>ծունդրը։

Ր ձայնորդն ավելացել է ծ և հ բաղաձայններից առաջ. ինչպես՝ ածելի>առծրլի, պատուհան>պադրրհան։

Տ բաղաձայնն ավելացել է շրեշ>շըրէշտ բառի վերջում։

Ապսպրել>արբսպարիլ և ձող>ծօղի բառերից առաջինում ավելացել է ա, երկրորդում՝ ր ձայնավորը։

Դրափոխություն

Քանաքեռի ենթաբարբառում առկա են դրափոխության հետևյալ դեպքերը.

ա) կն||նգ—ականջ>անգաջ, արմուկն>արմունգ

բ) քն||նք—զոքանչ>գանքաչ

գ) մր||րմ—կամուրջ>կարմունջ

դ) պր||րպ—կապերտ>կարպէտ

ե) մհ||հմ—ժամհար>ժահմար

զ) կն||նկ—թիկն>թինդը

է) շխ||խշ—բաշխել>բախշիլ

ր) խս||սխ—խստոր>սրխտոր

թ) սխ||խս—փսխէլ>փըխսիլ

ժ) նլ դասավորությունը ազատ դիրքում փոխվում է լն-ի, ինչպես՝ բանալի>պըլանիք, անալի>ալանի։

Եզրակացություն

1. Քանաքեռի ենթաբարբառի բաղաձայնական սիստեմը երկաստիճան ձայնեղազուրկ է։

2. Բառասկզբի կ, ք և բառամիջի գ, կ, ք պայթականները Լ. Ի ձայնավորներից և յ կիսաձայնից առաջ քմայնանում են։

3. Ձայնավորների արտաբերումը խիստ նման է արդի գրական լեզվի ձայնավորների արտասանությանը։

4. Հին հայերենի ե, ո ձայնավորները ենթաբարբառում բացակայում են։

5. Ձայնավորների հնչյունափոխությունը կատարվում է մեծ մասամբ շեշտի տեղափոխության հետևանքով։